ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2024 թվականի N 1004 - Ն

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԱՋԱԿՑՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ, ԱՌԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2023 թվականի սեպտեմբերի 13-ի ՀՕ-275-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցներ տրամադրելու և դրանց վերանորոգումն իրականացնելու կարգը և պայմանները՝ համաձայն N 1 հավելվածի.

2) աջակցող միջոցների ցանկը, պետական հավաստագրերով և առանց պետական հավաստագրերի տրամադրվող աջակցող միջոցների գումարի չափը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) պետական հավաստագրերով և առանց պետական հավաստագրերի տրամադրվող աջակցող միջոցների վերանորոգման փոխհատուցման գումարի չափը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) ֆունկցիոնալ պրոթեզների համար սույն որոշման N 2 հավելվածով սահմանված ժամկետները տարածվում են նաև 2021 թվականի ապրիլի 19-ին Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, «Հայաստան» համահայկական հիմնադրամի, «Իթերնալ Նեյշն Ֆաունդեյշն Արմենիա» բարեգործական հիմնադրամի և շահագրգիռ այլ կողմերի միջև կնքված փոխըմբռնման հուշագրերի շրջանակում ֆունկցիոնալ պրոթեզ ստացած անձանց վրա.

2) մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված լինելու մասին անձին տրված բժշկասոցիալական փորձաքննական որոշումները (վարչական ակտը վարչական ակտերի քաղվածքները) իրենց վավերականության ժամկետում հիմք են հանդիսանում սույն որոշմամբ սահմանված իրավունքներից օգտվելու համար.

3) մինչև 2024 թվականի հունվարի 1-ը հաշմանդամություն ունեցող անձին տրված վերականգնողական անհատական ծրագիրը (այսուհետ՝ ՎԱԾ) հիմք է հանդիսանում դրանով երաշխավորված աջակցող միջոց տրամադրելու համար իր վավերականության ժամկետում.

4) սույն որոշման N 1 հավելվածի N 4 ձևով սահմանված տեղեկանքը տրվում է մինչև 2024 թվականի հունվարի 1-ը հաշմանդամություն ունեցող անձին տրված ՎԱԾ-ի վավերականության ժամկետը լրանալուց հետո (անժամկետ հաշմանդամության դեպքում), ՎԱԾ-ով երաշխավորված աջակցող միջոցը ստանալու համար կամ վերին և ստորին վերջույթների պրոթեզների, ձայնաստեղծ սարքերի, ձայնալարերի պրոթեզների, ականագնդի պրոթեզների, կրծքագեղձի էկզոպրոթեզի կարիք

ունեցող անձանց՝ բժշկական փաստաթղթերի հիման վրա: ՎԱԾ-ով չերաշխավորված և սույն կետում նշված բժշկական փաստաթղթերի բացակայության դեպքում նոր աջակցող միջոց ստանալու համար անձին տրվում է ծառայությունների անհատական ծրագիր՝ ֆունկցիոնալության գնահատման արդյունքում.

5) բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի որոշմամբ անձի «1-ին խմբի հաշմանդամ անձ» կարգավիճակը հավասարեցվում է անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի որոշմամբ սահմանված «ֆունկցիոնալության խորն աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ» կարգավիճակին.

6) բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի որոշմամբ անձի «2-րդ խմբի հաշմանդամ անձ» կարգավիճակը հավասարեցվում է անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի որոշմամբ սահմանված «ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ» կարգավիճակին.

7) բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի որոշմամբ անձի «3-րդ խմբի հաշմանդամ անձ» կարգավիճակը հավասարեցվում է անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի որոշմամբ սահմանված «ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ» կարգավիճակին:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Վերականգնողական օգնության տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, աջակցող միջոցների պետական հավաստագրերի և դրանց հիման վրա տրամադրվող աջակցող միջոցների վերանորոգման, ինչպես նաև առանց պետական հավաստագրի տրամադրվող աջակցող միջոցների համար նախատեսված փոխհատուցման գումարի չափը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 22-ի N 1369-Ն և 2007 թվականի ապրիլի 12-ի N 453-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1035-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

28.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ